հատվածում և հայտնի էր Ակր ալ-Համիդիյա (ալ-Համայդիյա) անունով։ Իսկ Շուշը ավելի բարձրադիր փոքր բերդ էր և գտնվում էր Ակրի մոտակայքում[21]։

Մոսուլի մարզում բնակվող քրդական ցեղերից էին ալ-Մարանիյան (ալ-Մադրանիյա), ալ-Քիքան, ալ-Բուխթիյան և այլն։

Քրդական ցեղերի կարևոր օջախներից էր Էրբիլի (Արբելա) շրջանը, որը նույնպես մտնում էր Մոսուլի մարզի մեջ։ Յակութը գրում է, որ բազմաթիվ ամրոցներ ունեցող Էրբիլի բնակչության մեծամասնությունը կազմված է արաբացած քրդերից[22]։ Իբն ալ-Ասիրը նշում է, որ XII դ. այստեղ էին բնակվում ալ-Խաթիյա և ալ-Հիքմիյա քրդական ցեղերը[23]։ Դրանցից վերջինն արաբ աշխարհագիր Աբու Դուլաֆի (X դ.) տվյալներով X դ. բնակվում էր Շահրիզուրում[24]։

Մոսուլի մարզում և հարակից տարածքներում իր ագրեսիվ գործողություններով աչքի էր ընկնում քրդական հայտնի ալ-Հադբանիյա խոշոր ցեղային միությունը։ Եղած նյութերը թույլ են տալիս ասելու, որ կիսաքոչվորական կյանք վարող այս ցեղի հիմնական բնակավայրը Նինվեից հյուսիս-արևելք ընկած շրջանն էր։ Անասնապահ հադբանիները ձմեռում էին հիմնականում երկու Զաբերի միջև ընկած վայրերում, որոնք հայտնի էին որպես «Մաշաթի ալ-Հադբանիյա»՝ հադբանիների ձմեռանոցներ[25]։ Մինչև X դ. դեպի Մոսուլի դրեթե բոլոր շրջանները և Դասինի լեռնային հատվածներն այս ցեղի տեղաշարժերը բավական մեծ շրջանակներ ընդունեցին։ Աբու Դուլաֆը նշում է, որ Դասինի շրջաններում հադբանի քրդերը երկար ժամանակ անկախ էին և ավերում էին այդ վայրերը։ Աբբասյանները նրանց հնազանդեցնելով վերականգնեցին ավերված շինություններն ու Դասինում կարգուկանոն հաստատեցին[26]։ Բացի այդ, հադբանիները Էրբիլի շրջանում ալ-Համիդիյա ցեղի զբաղեցրած տարածքի շրջակայքում ունեին ամրոցներ[27]։ Իբն Հաուկալի (X դ.) խոսքերից երևում է, որ Ուրմիա լճի մոտ ընկած Ուշնու շրջանը գտնվում էր հադբանիների տիրապետության տակ։ Այստեղ էին նրանք անցկացնում ամառը և Ուշնու քաղաքում առևտուր կատարում[28]։

Խնդրո առարկա ժամանակաշրջանում քրդերը լայնորեն տարածված էին նաև Ջիբալի նահանգում[29]։ Արաբ հեղինակները նրանց հիշատակում են Շահրիզուրում, Կարմասինում (Քերմանշահ), Համադանում, Նեհավանդում և այլուր։ Մասնավորապես Շահրիզուրը VII—X դդ. վերածվել էր ռազմաքաղաքա-

---

21 ياقوت ، معجم البلدان ، ج. ٣ ، ص ٣٧٢ ، ابن الاثير ، الكامل ، ج. ٨ ص ٢٤٣

22 ياقوت ، معجم ، ج. ١ ، ص ١٣٧ .

23 ابن الاثيـــر ، الكامل ، ج. ٨ ، القاهرة ، ١٣٥٣ ، ص ٢٠٢ ، ٢٣٧ .

24 «Вторая записка Абу Дулафа», М., 1960, с. 18.

25 Ibn Haukal, Vlae et Regna Desciptio ditionis moslemicac (BGA), ed. M. J. De Gocje, Lugduni Batavorum Apud E. J. Brill, 1873, p. 156.

26 «Вторая записка Абу Дулафа», с. 18.

27 ابن الاثير ، الكامل ، ج. ٨ ، ص ٤٩ .

28 Ibn Haukal, Նշվ. աշխ., էջ 239։

29 Ջիբալը (արաբերեն «ջաբալ»՝ սար բառի հոգնակի թիվն է) աշխարհագրական-վարչական բաժանում էր արաբական շրջանում։ Նրա կազմի մեջ մտնում էին արևմտյան Իրանի լեռնային մի շարք գանգվածներ, ինչպես նաև պատմական Մարաստանի մի մասը՝ Համադան կենտ-